ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2014թ. N 804-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 639-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 13-ի «Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 639-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում հանել «բուժիչ» բառից հետո դրված ստորակետը.

2) որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սահմանել, որ գործող տնտեսվարող սուբյեկտները (այդ թվում՝ սերտիֆիկացնող) պետք է մինչև 2015 թվականի հունիսի 1-ը շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջները (այդ թվում՝ սերտիֆիկացմանը վերաբերող պահանջները) համապատասխանեցնեն կանոնակարգին, իսկ այս ոլորտներում նոր գործունեություն ծավալող սուբյեկտները՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո: Կանոնակարգի 48-րդ կետն ուժի մեջ կմտնի 2016 թվականի հունվարի 1-ից, իսկ սննդի շղթայի 5-10-ը ներառյալ աշխատողներ ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար՝ 2019 թվականի հունվարի 1-ից:»:

3) որոշման հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում՝

ա. «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. ստացվում է հանքային ջրի բնական աղբյուրից կամ հորատանցքից, տեղափոխվում է խողովակաշարով կամ ցիստեռններով և շշալցվում է շշալցվող ջրերին ներկայացվող հիգիենայի կանոնների պահպանմամբ,»,

բ. «դ» պարբերությունը «մաքրությունը» բառից հետո լրացնել «և հիմնական բաղադրիչների քիմիական կազմը» բառերով,

գ. «ե» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

4) որոշման հավելվածի 22-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) արտադրողի կողմից օգտագործվող առևտրային անվանումը (ապրանքային նշանը)».

5) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 23-րդ կետը.

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ